ի Հայս. և յաղագս սուրբ խաչին որ ի Վարագ ցուցաւ։

4. Թղ. 9ᵖ Մեր հրատարակելիք ներբողն է. «Ներբողեան պատմագրաբար ասացեալ սրբազան եպիսկոպոսի և վարդապետի՝ Տէր Կարապետի Սասնացւոյ ի խնդրոյ Հոմաղնեա եղբաւր Ճգնաւորի՝ յաղագս վարուց և մահուան սուրբ և երջանիկ վարդապետին Մեսրոբա Թարգմանչի և լուսաւորչի»։

5. Թղ. 21ᵐ Խաւսք Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապպադոկեցւոյ՝ ընդդէմ այնոցիկ որք Թերացուցանեն զփառս Որդւոյն Աստուծոյ քան զՀաւրն, և իջուցանեն զՀոգին Սուրբ ի հնազանդութիւն, և հաւասարեն ընդ հաւասարութիւն արարածոց։

6. Թղ. 73ᵐ — 454 ի վերջը պարունակում է Գործք Առաքելոցի մեկնութիւնը։ ա

Այս ձեռագրում պահուած մեկնութիւնը շատ մասերով զանազանուում է 1839 Թ. Վենետկում տպագրածից. երկուսի թեթև բաղդատութիւնը եզրակացնել է տալիս, որ Սոկրատի եկեղեցական պատմութեան պէս Գործք Առաքելոցի մեկնութիւնից ևս երկու տարբեր օրինակներ կան. մէկը սկզբնական յունարան և դժուար հասկանալի թարգմանութիւնն է։ Թարգմանել է տուել Գրիգոր Վկայասէր կաթուղիկոսը «յամին 1077.. ես Գրիգորիս որդի Գրիգորի Պահլաւունւոյ, ողորմութեամբ մեծին Աստուծոյ արժանացեալ աթոռոյ հա-

---

ա. Մեկնութիւն Գործոց Առաքելոց, խմբագիր արարեալ նախնեաց յՈակերևանք եւ յԵփրեմէ, ի Վենետիկ 1839։